# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2217 գ. Գեղաշեն, 1-ին փողոց 30 Վարչական շենք, Հեռ. (060) 286013 , էլ.փոստ gechashen67@mail.ru

21.02.2018թ. N01/32-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

**Հարգելի Պետրոսյան**

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 2 էջ

**Համայնքի ղեկավար՝** Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան
Հեռ. 077427455

ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼԻՑ No 32
«21» 02 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 4

## ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով որոշում եմ՝

1. Գեղաշեն համայնքում գտնվող՝ 07-023-0152-0023 ծածկագրի 0.09հա, 07-023-0142-0150 ծածկագրի 0.18հա և 07-023-0164-0024 ծածկագրի 0.4հա օրինական հողամասերին (վարելահողերին) կից, փաստացի օգտագործվող, ինքնակամ զբաղեցրած, համապատասխանաբար 0.06801հա, 0.00645հա և 0.03662հա հողամասերի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ՝ Միեր, Անահիտ, Արթուր, Արմեն Հարությունյանների սեփականության իրավունքը:
2. Պարտավորեցնել Միեր, Անահիտ, Արթուր, Արմեն Հարությունյաններին 07-023-0152-0023 կադաստրային ծածկագրի՝ 0.09հա օրինական հողամասի 20%-ից ավել 0.05001հա հողամասի համար համայնքի բյուջեի N900105209176 հաշվեհամարին մուծել 8330(ութ հազար երեք հարյուր երեսուն)դրամ:
3. Ինքնակամ զբաղեցրած 0.06801հա, 0.00645հա և 0.03662հա հողամասերը համայնքի գլխավոր հատակագծով և օգտագործման սխեմայով նախատեսված չեն այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողամասերի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ինչպես նաև ընդգրկված չեն ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման գոտիներում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20/18թ. փետրվարի 12
գ.Գեղաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 5

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով որոշում եմ՝

1. Գեղաշեն համայնքի 1-ին թաղամասի 4-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող՝ Մհեր, Անահիտ, Արթուր, Արմեն Հարությունյաններին պատկանող 0,13702հա (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր N323, 2018 թվականի հունվարի 25-ի) հողամասում (կադաստրային ծածկագիր 07-023-0095-0020) 1992 թվականին ինքնակամ կառուցված 22.75քմ ընդհանուր մակերեսով շինությունները և 1,3քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018թ. փետրվարի 12
գ.Գեղաշեն